ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«-----» հոկտեմբերի 2012թ. **N----- -Ա**

ՈՐՈՇՈՒՄ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 24-Ի N 258-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի համապատասխան՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի ավագանու 2011թվականի հունիսի 24-ի «Միավորված Ազգերի Զարգացման Ծրագրի հայաստանյան գրասենյակի «Գեղեցիկ Երևան» ծրագրին մասնակցելու մասին» N258-Ա որոշմամբ հաստատված հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) «Նպատակը» հատվածում *«զարգացման 2011թ. ծրագրով և/կամ 2012թ. նախատեսվող»* բառերը փոխարինել *«զարգացման ծրագրով նախատեսվող»* բառերով:

2) «Ծրագրի նկարագրությունը և բյուջեն» հատվածի առաջին պարբերության առաջին նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ *«Գեղեցիկ Երևան» ծրագիրը իրականցվելու է սկսած 2011թ.-ից և ունենալու է շարունակական բնույթ, որը նախատեսում է առաջին երեք տարում Երևան քաղաքում 350.7 մլն. ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ ծրագրի իրականացում՝ հավասար բաշխմամբ համաֆինանսավորմամբ»:*

3) «Ծրագրի նկարագրությունը և բյուջեն» հատվածի առաջին պարբերության 3-րդ նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Այսինքն, քաղաքապետարանը ՄԱԶԾ-ի տնօրինությանը 2011-2013թթ ընթացքում հատկացնելու է 175.35 մլն ՀՀ դրամ և հաշվի առնելով ՄԱԶԾ-ի նույնչափ հատկացումը ծրագրի իրականացման աշխատանքներին՝ 2011-2013թթ կիրականացվի 350,7 մլն. ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ ծրագիր, որտեղ 2011թ. բյուջեն կազմում է 68,39 մլն ՀՀ դրամ, 2012թ.՝ 142.31 մլն ՀՀ դրամ, իսկ 2013թ.՝ 140 մլն ՀՀ դրամ»:

4) «Ծրագրի նկարագրությունը և բյուջեն» հատվածի առաջին պարբերության 3-րդ նախադասությունից հետո ավելացնել հետևյալ նախադասությունը՝ *«2013թ.-ից հետո ծրագրի շարունակման դեպքում՝ բյուջեն կավելացվի համաձայն կողմերի փոխադարձ համաձայնության և պայմանավորվածության՝ հավասար բաշխմամբ համաֆինանսավորմամբ»:*

5) «Ծրագրի նկարագրությունը և բյուջեն» հատվածի երկրորդ պարբերությունում ավելացնել հետևյալ նախադասությունը՝ *«2013թ. համար նախատեսվում են տարբեր վարչական շրջաններում այգիների,*

շատրվանների, անբարեկարգ տարածքների բարեկարգման, գեղարվեստական ձևավորման, արտաքին լուսավորության և այլ աշխատանքներ: 2013թ.-ից հետո ծրագրի շարունակման դեպքում աշխատանքները կիրականացվեն ծրագրի նպատակի համաձայն»:

6) «Պայմանագրի հիմնական դրույթները» հատվածի 1-ին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Քաղաքապետարանը ՄԱԶԾ-ի տնօրինությանն է հանձնում պայմանագրի արժեքի իր չափաբաժնի չափով ՀՀ դրամի հատկացում, իսկ ՄԱԶԾ-ն ծրագրի իրականացման համար կատարում է իր չափաբաժնի չափով ՀՀ դրամի հատկացում՝ պայմանագրով սահմանված ժամանակացույցով»:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 24-Ի N 258-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Երևան քաղաքի ավագանու 24.06.11թ. N258-Ա «Միավորված Ազգերի Զարգացման Ծրագրի (ՄԱԶԾ) Հայաստանյան գրասենյակի «Գեղեցիկ Երևան» ծրագրին մասնակցելու մասին» և 24.10.2011թ. N316-Ա «Երևան քաղաքի ավագանու 24.06.11թ. N258-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» որոշումներով տրվել է համաձայնություն «Գեղեցիկ Երևան» ծրագրի իրականացմանը և սահմանվել է ծրագրի նպատակը, շահառուները, ծրագրի նկարագրությունը և բյուջեն, ծրագրի իրագործումը և կողմերի միջև կնքվող պայմագրի հիմնական դրույթները: Ծրագրի շրջանակներում 2011-2012թթ. ընթացքում իրականացվել են Երևանի Հովհաննես Թումանյանի անվան պետական տիկնիկային թատրոնի շենքի արտաքին գեղարվեստական ձևավորման և լուսավորման, Երևան քաղաքի Սայաթ-Նովայի անվան երաժշտական դպրոցի շենքի բարեկարգման (ներառյալ ճակատային հատվածի հին պատուհանների փոխարինումը նոր պատուհաններով) և լուսավորման, Ս.Շահումյանի հուշարձանի պատվանդանի վերանորոգման և հարակից տարածքի բարեկարգման, Կոմիտասի անվան կամերային երաժշտության տան ճակատային հատվածի լվացման և դեկորատիվ որմնանկարների վերականգնման, Սայաթ-Նովա պողոտայի հ.13 և հ.15 շենքերի միջակայքում գտնվող կամարաձև կառույցի գեղազարդ բարեկարգման, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի շենքի (ներառյալ հին պատուհանների փոխարինումը նոր պատուհաններով) և հարակից բակային տարածքի բարեկարգման, ինչպես նաև վերանորոգման կարիք ունեցող շենքերի շքամուտքերի վերանորոգման աշխատանքները: Ծրագրի 2012 թվականի ֆինանսական միջոցներով նախատեսվում է նաև իրականացնել Նոր-Նորք վարչական շրջանի Միկոյան-Գալշոյան փողոցների խաչմերուկին հարակից այգու բարեկարգման և վերակառուցման, ինչպես նաև Հանրապետության և Շառլ Ազնավուրի հրապարակներում գտնվող շատրվանների ձմեռային գեղազարդ լուսավորության աշխատանքները:

Արդյունավետ համագործակցության արդյունքում 15.03.12թ. տեղի ունեցած հանդիպման ժամանակ կողմերը հայտնել են ցանկություն շարունակել համագործակցությունը ծրագրի շրջանակներում: Արդյունքում ս.թ. մարտի 24-ի հ. 02/42-2077 գրությամբ ձեռք է բերվել նախնական համաձայնություն 2013թ. ծրագրին հատկացվող հնարավոր բյուջեի վերաբերյալ, որը թույլ կտա 2013թ. իրականացել 140 մլն ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ աշխատաքներ:

Երևան քաղաքի ավագանու 24.06.11թ. N258-Ա «Միավորված Ազգերի Զարգացման Ծրագրի (ՄԱԶԾ) Հայաստանյան գրասենյակի «Գեղեցիկ Երևան»

ծրագրին մասնակցելու մասին» և 24.10.2011թ. N316-Ա «Երևան քաղաքի ավագանու 24.06.11թ. N258-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» որոշումներով ծրագրի տևողությունը սահմանափակվում է 2012թ.-ով, իսկ բյուջեն՝ 210.7 մլն ՀՀ դրամով: Սույն փոփոխության դեպքում ծրագրին կտրվի շարունակական բնույթ և կնախանշվի 2013թ. աշխատանքների բյուջեն:

ՄԱԶԾ-ի հետ համագործակցությունը «Գեղեցիկ Երևան» ծրագրի շրջանակներում հնարավոր է դարձնում քաղաքապետարանի կողմից նախատեսվող աշխատանքները իրականացնել՝ խնայելով աշխատանքների արժեքի 50% և ավելի:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 24-Ի N 258-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան քաղաքի ավագանու 2011 թվականի հունիսի 24-ի N258-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չկա:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 24-Ի N 258-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան քաղաքի ավագանու 2011 թվականի հունիսի 24-ի N258-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի 2012թ. բյուջեում եկամուտների և ծախսերի փոփոխություն չի նախատեսվում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ